ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների
և մարդու իրավունքների գրասենյակ

Դատական անկախության հետազոտությունների
Մաքս Պլանք Միներվա խումբ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԻԵՎՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

- Դատական վարչարարություն, ընտրություն և հաշվետվողականություն **-**

Կիև, 23-25 հունիս, 2010 թ.

Դատական անկախությունը արդար դատավարության իրավունքի, օրենքի գերակայության և ժողովրդավարության կարևորագույն նախադրյալներից է: Թվարկված սկզբունքներին համահունչ դատական անկախությունն ամրապնդելու գործում Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետություններին օժանդակելու նպատակով ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) Հանրային և միջազգային համեմատական իրավունքի Մաքս Պլանքի ինստիտուտի հետ համատեղ կազմակերպեց և Կիևում անցկացրեց դատական անկախության հարցերով փորձագետների տարածաշրջանային խորհրդակցություն: Հանդիպմանը մասնակցեցին մոտ 40 անկախ փորձագետներ, ներառյալ՝ ԵԱՀԿ-ի մասնակից 19 պետությունների հայտնի գիտնականներ և բարձրաստիճան պրակտիկ աշխատողներ, ինչպես նաև՝ Եվրոպայի խորհրդի և Վենետիկյան հանձնաժողովի ներկայացուցիչներ:

Դատական անկախության հետ առնչվող իրավական համակարգերի և պրակտիկայի մանրակրկիտ հետազոտության հիման վրա ԺՀՄԻԳ-ը և Մաքս Պլանքի ինստիտուտն ընտրեցին դատական անկախության համար կարևորվող հետևյալ երեք թեմաները. (1) դատական վարչարարություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դատական խորհուրդներին, դատական ինքնակառավարման մարմիններին և դատարանների նախագահների դերին, (2) դատավորների ընտրությունը՝ չափորոշիչներ և ընթացակարգեր, և (3) դատավորների հաշվետվողականությունը և դատական անկախությունը դատական որոշումների կայացման գործընթացում: Հանդիպման ավարտին ընդունվեց հանձնարարականների ոչ սպառիչ ցանկ (առդիր՝ «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ կիևյան հանձնարարականներ»):

Հանձնարարականների նպատակն է նշված երեք թեմատիկ ոլորտներում էլ ավելի ամրապնդել դատական անկախությունը տարածաշրջանում:

Մասնակից պետություններին առաջարկվում է ուսումնասիրել Կիևյան հանձնարարականներում զետեղված գաղափարները և ուղենիշները, բացահայտել այն ոլորտները, որոնցում իրենց պրակտիկան արդեն իսկ համահունչ է հանձնարարականներին, և այդ մասին տեղեկություններ տրամադրել ԺՀՄԻԳ-ին: Ըստ այդմ, ԺՀՄԻԳ-ը կօժանդակի փորձի փոխանակմանը և տեխնիկական աջակցություն կցուցաբերի մասնակից այն պետություններին, որոնք ցանկություն կհայտնեն՝ Կիևյան հանձնարարականների մեջ ներառված միջոցառումների իրագործմամբ էլ ավելի ամրապնդելու իրենց դատական համակարգերի անկախությունը:

<u>I մաս. դատական վարչարարությունը</u>

1. Դատարանների և դատական համակարգի վարչարարությունը պետք է նպաստեն անկախ և անկողմնակալ դատական որոշումների կայացմանը՝ արդար դատավարության իրավունքներին և օրենքի գերակայությանը համահունչ: Դատական վարչարարությունը երբևէ չպետք է օգտագործվի դատարաններում կայացվող որոշումների բովանդակության վրա ազդելու նպատակով: Դատական վարչարարության գործընթացը պետք է թափանցիկ լինի:

<u>Դատական խորհուրդները, որակավորման հանձնաժողովները և ինքնակառավարման մարմինները</u>

Իրավասությունների բաժանումը դատական համակարգում

2. Դատական խորհուրդները դատական վարչարարության կոնկրետ առաջադրանքներով և անկախ իրավասություններով օժտված մարմիններ են, որոնք խնդիրը դատական անկախությունը երաշխավորելն է: Դատական մեկ մարմնում իշխանության ավելորդ կենտրոնացումից և կորպորատիզմի ընկալումներից խուսափելու նպատակով խորհուրդ է տրվում տարբերակել տարբեր իրավասությունները, օրինակ՝ ընտրությունը (*տես 3-4-րդ, 8-րդ պարբերություններ*), դատավորների մասնագիտական առաջխաղացումը և վերապատրաստումը, կարգապահական վարույթները (*տես 5-րդ, 9-րդ, 14-րդ, 25-26-րդ պարբերություններ*), մասնագիտական գնահատումը (*տես 27-28-րդ պարբերություններ*) և բյուջեն (*տես 6-րդ պարբերություն*): Արդյունավետ տարբերակ է դատական վարչարարության կոնկրետ ուղղություններով լիազորված տարբեր անկախ մարմինների ստեղծումը՝ դրանց չենթարկելով որևէ մեկ կառույցի կամ գերատեսչության հսկողությանը: Այդ մարմինների յուրաքանչյուրը կազմավորելիս պետք է հաշվի առնել դրա

առանձնահատուկ խնդիրները: Նրանց աշխատանքը պետք է կանոնակարգել օրենքով, այլ ոչ՝ գործադիրի որոշումներով:

Դատավորների ընտրությունը

3. Եթե այս խնդիրը որևէ այլ անկախ մարմնի վրա դրված չէ, ապա պետք է ստեղծել առանձին փորձագիտական հանձնաժողով՝ դատավորների ընտրության գործընթացում գրավոր և բանավոր քննություններն անցկացնելու նպատակով (*տես նաև 8-րդ պարբերությունը)*: Այս պարագայում, դատական խորհրդի լիազորությունները պետք է սահմանափակել պատշաճ ընթացակարգերի պահպանումը ստուգելով և կամ հանձնաժողովի ընտրած թեկնածուներին նշանակելով, կամ նշանակող մարմնին նրանց առաջադրելով: (*Նշանակման գործընթացի վերաբերյալ տես 21-23-րդ պարբերությունները:*)

4. Որպես այլընտրանք, դատավորների ընտրության և վերապատրաստման պատասխանատվությունն ուղղակիորեն կարող է դրվել դատական խորհուրդների, որակավորման հանձնաժողովների կամ որակավորման կոլեգիաների վրա: Այդ պարագայում հույժ կարևոր է, որպեսզի թվարկված մարմինները չլինեն գործադիր հսկողության ներքո, այլ՝ գործեն տարածքային կառավարման մարմիններից անկախ (*կազմավորման կարգի վերաբերյալ նույնպես տես 8-րդ պարբերությունը):*

Կարգապահական վարույթները

5. Կորպորատիզմի վերաբերյալ հնչեցվող մեղադրանքները բացառելու և կարգապահական արդար ընթացակարգ երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի դատական խորհուրդները միաժամանակ օժտված չլինեն հետևյալ երկու իրավասություններով. ա) բողոքների ստացում և կարգապահական քննության անցկացում, և բ) գործի քննություն և կարգապահական տույժի վերաբերյալ որոշման կայացում: Կարգապահական որոշումները պետք է ենթակա լինեն իրավասու դատարանի կողմից վերաքննության կարգով հսկողության (*տես նաև 9-րդ, 14-րդ, 25-26-րդ պարբերությունները*):

Բյուջետային խորհուրդները

6. Չսահմանափակելով դատական համակարգի բյուջեն առաջարկելու և հաստատելու՝ ներկայումս համապատասխանաբար կառավարությանը և խորհրդարանին վերապահված իրավասությունները, ցանկալի կլիներ, որպեսզի դատական համակարգի շահերը ներկայացնող որևէ մարմին, օրինակ՝ դատական խորհուրդը, կարողանա կառավարությանը ներկայացնել դատական համակարգի բյուջետային կարիքները, քանի որ դա կնպաստի իրազեկված որոշումների կայացմանը: Բացի այդ, բյուջեի քննարկումների շրջանակում այդ մարմնի կարծիքը պետք է լսվի նաև խորհրդարանում: Դատական խորհուրդները կարող են

դերակատարում ունենալ նաև դատական համակարգի ներսում բյուջեի բաշխման հարցերում:

Դատական խորհուրդների կազմավորումը

7. Եթե ստեղծվում է դատական խորհուրդ, ապա դրա անդամ դատավորները պետք է ընտրվեն այլ դատավորների կողմից և ներկայացնեն ողջ դատական իշխանությունը, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանների դատավորներին: Դատական խորհուրդներում չպետք է գերիշխող ազդեցություն ունենան վերաքննիչ դատարանների դատավորները: Այն դեպքերում, երբ խորհրդի կազմում նշանակվում է դատարանի նախագահ, նա պետք է վայր դնի դատարանի նախագահի լիազորությունները: Դատավորների կողմից ընտրված դատական խորհրդի կազմում զգալի թվով դատավոր անդամներից զատ՝ պետք է լինեն նաև իրավագիտության դասախոսներ. ցանկալի է ընդգրկել նաև փաստաբաններ, որպեսզի այն ավելի ներառական և թափանցիկ լինի: Այն երկրներում, որոնցում դատախազները չեն մտնում միևնույն կորպուսի մեջ, ինչ դատավորները, դատախազները պետք է չներառվեն դատական խորհրդի կազմում: Պետք է արգելել նաև իրավապահ և իրավակիրառ մարմինների այլ ներկայացուցիչների մասնակցությունը: Խորհրդի ղեկավարը չպետք է լինի պետության նախագահը կամ արդարադատության նախարարը: Դատական խորհրդի նախագահը պետք է ընտրվի անդամների թվից՝ ձայների մեծամասնությամբ: Դատական խորհրդի աշխատանքում չպետք է գերիշխող ազդեցություն ունենան իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի ներկայացուցիչները:

Դատավորների ընտրության վերաբերյալ որոշումներ կայացնող մարմինների անդամները

8. Դատավորների ընտրության հատուկ հանձնաժողովների անդամները (*տես 3-րդ պարբերությունը*) պետք է նշանակվեն դատական խորհրդի կողմից՝ մասնագետ իրավաբանների, այդ թվում՝ դատական իշխանության ներկայացուցիչների թվից: Եթե դատական խորհուրդները, որակավորման հանձնաժողովները կամ որակավորման կոլեգիաներն են ուղղակիորեն պատասխանատու դատավորների ընտրության համար (*տես 4-րդ պարբերություն*), անդամները պետք է նշանակվեն պաշտոնավարման որոշակի սահմանված ժամկետով: Ընտրությունը կատարող մարմնի կազմում զգալի թվով դատավորներ ընգրկելուց զատ, ցանկալի է մասնագիտական այլ խմբերի (իրավունքի պրոֆեսորներ, փաստաբաններ) ընդգրկումը, որի վերաբերյալ որոշումը պետք է կայացվի համապատասխան իրավական մշակույթի և փորձառության հիման վրա: Մարմնի կազմը պետք է լինի այնպիսին, որպեսզի քաղաքական նկատառումները չգերակայեն դատավորի պաշտոնի թեկնածուի մասնագիտական որակավորման նկատմամբ (*տես 21-րդ պարբերությունը*):

Կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող մարմինների կազմը

9. Կարգապահական վարույթ քննելու և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությամբ օժտված մարմինները (*տես 5, բ պարբերությունը*) չպետք է կազմված լինեն բացառապես դատավորներից: Դրանց կազմում պետք է լինեն նաև այլ մասնագիտական շրջանակների ներկայացուցիչներ: Պաշտոնավարման ժամկետի ընթացքում տվյալ մարմինների կազմում ընդգրկված դատավոր անդամները չպետք է կատարեն դատավորներին կամ դատական հանրությանը առնչվող այլ գործառույթներ՝ օրինակ՝ վարչարարական, բյուջետավորման կամ դատավորների ընտրության: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող մարմինները չպետք է վերահսկվեն գործադիր իշխանության կողմից: Պետք է բացառել կարգապահական հարցերով կայացվող որոշումների նկատմամբ քաղաքական ազդեցությունը: Դատական խորհուրդների կամ կարգապահական վարույթների առնչությամբ լիազորություններով օժտված մարմինների նկատմամբ իշխանության գործադիր թևի ցանկացած վերահսկողությունից անհրաժեշտ է խուսափել: (*Տես նաև 5-րդ, 25-26-րդ պարբերություններ:*)

Դատական վարչարարության թափանցիկությունը

10. Դատական խորհուրդը պետք է իր խնդիրները լուծելու նպատակով պարբերաբար նիստեր գումարի: Դատական խորհրդի քննարկումների հասանելիությունը հանրությանը և խորհրդի որոշումների հրապարակումը պետք է երաշխավորված լինեն օրենքով և պրակտիկայում:

<u>Դատարանների նախագահների դերը</u>

11. Դատարանների նախագահների դերը պետք է խստորեն սահմանափակված լինի հետևյալ իմաստով. նրանք պետք է ստանձնեն միայն այնպիսի դատական գործառույթներ, որոնք համարժեք են դատարանի այլ անդամների կողմից իրականացվող գործառույթներին: Դատարանի նախագահը չպետք է միջամտի այլ դատավորների կողմից դատական որոշումների կայացմանը և չպետք է մասնակցի դատավորների ընտրությանը: Դատարանի նախագահը չպետք է կարողանա ազդել վարձատրության վրա (*պարգևավճարների և արտոնությունների վերաբերյալ տես 13-րդ պարբերությունը*): Նրանք կարող են ունենալ ներկայացուցչական և վարչական, այդ թվում՝ ոչ դատական աշխատողների նկատմամբ հսկողության գործառույթներ: Վարչական գործառույթները կատարելու համար անհրաժեշտ է կառավարչական կարողությունների զարգացման համար նախատեսված վերապատրաստում: Դատարանների նախագահները չպետք է դատարանի ռեսուրսները բաշխելու՝ իրենց իրավասությունները չարաշահեն դատավորների նկատմամբ ազդեցություն գործադրելու նպատակով:

Գործերի բաշխումը

12. Վարչական այն որոշումները, որոնք կարող են ազդել գործի՝ ըստ էության լուծման վրա, չպետք է վերապահված լինեն դատարանի նախագահի բացառիկ իրավասությանը: Նման որոշման օրինակ է գործերի բաշխումը, որը պետք է իրականացվի կամ պատահական կարգով, կամ՝ կանխորոշված, հստակ և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, որոնք կսահմանվեն դատարանի դատավորների կոլեգիայի կողմից: Գործերի բաշխման սահմանված մեխանիզմի աշխատանքին չպետք է միջամտել:

Անհատական պարգևավճարները և արտոնությունները

13. Երկարաժամկետ հատվածում անհրաժեշտ է վերացնել պարգևավճարները և արտոնությունները, իսկ աշխատավարձերը՝ հասցնել համարժեք այնպիսի մակարդակի, որը բավարար կլինի՝ ապահովելու դատավորների պատշաճ կենսամակարդակը, և հավուր պատշաճի կարտացոլի նրանց մասնագիտության պատասխանատվության աստիճանը: Եթե կան պարգևավճարներ և արտոնություններ, ապա դրանք պետք է տրամադրվեն նախապես սահմանված և թափանցիկ ընթացակարգի հիման վրա: Դատարանների նախագահները չպետք է կարողանան ազդել պարգևավճարների կամ արտոնությունների վրա:

Սահմանափակ դերը դատավորների նկատմամբ հարուցվող կարգապահական վարույթներում

14. Դատարանների նախագահներն իրավասու են բողոք ներկայացնել բողոքներ ստանալու և կարգապահական վարույթ իրականացնելու իրավասությամբ օժտված մարմնին (*տես 5, ա պարբերություն*): Բողոքի անկախ և օբյեկտիվ քննությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատարանների նախագահները չունենան կարգապահական վարույթ հարուցելու կամ կարգապահական տույժ կիրառելու իրավասություն:

Պաշտոնավարման սահմանափակ ժամկետը

15. Դատարանների նախագահները պետք է նշանակվեն սահմանափակ թվով տարիների պաշտոնավարման ժամկետով՝ վերջինս ընդամենը մեկ անգամ երկարաձգելու հնարավորությամբ: Գործադիրի կողմից նշանակման դեպքում պաշտոնավարման ժամկետը պետք է կարճ լինի՝ առանց երկարաձգման հնարավորության:

Դատարանների նախագահների թափանցիկ և անկախ ընտրությունը

16. Դատարանների նախագահների ընտրությունը պետք է թափանցիկ լինի: Դատարանի նախագահի թափուր տեղի առկայության մասին անհրաժեշտ է

հայտարարություն հրապարակել: Պետք է կարողանան դիմել պահանջվող ստաժ/փորձ ունեցող բոլոր դատավորները: Ընտրելու իրավասությամբ օժտված մարմինը կարող է անցկացնել թեկնածուների հարցազրույցներ: Արդյունավետ տարբերակ է, օրինակ, կոնկրետ դատարանի դատավորների կողմից այդ դատարանի նախագահի ընտրության մեխանիզմը: Գործադիրի կողմից նշանակման դեպքում առաջադրում կատարելու իրավասությունը պետք է վերապահվի խորհրդակցական մարմնի, օրինակ՝ դատական խորհրդին կամ որակավորման հանձնաժողովին (*տես 4-րդ պարբերությունը*)՝ հաշվի առնելով նաև տեղի դատավորների կարծիքները, ընդ որում՝ գործադիրը պետք է իրավունք ունենա առաջադրումը մերժել միայն պատճառաբանված որոշմամբ: Այդ դեպքում խորհրդակցական մարմինն իրավասու է առաջադրել այլ թեկնածուի: Բացի այդ, գործադիրի անհարկի ճնշումից պաշտպանվելու նպատակով խորհրդակցական մարմինը պետք է հնարավորություն ունենա ձայների որակյալ մեծամասնությամբ հաղթահարել գործադիրի վետոն:

II մաս. դատավորների ընտրությունը և վերապատրաստումը

Դատավորի մասնագիտության հասանելիությունը տարբեր սուբյեկտների համար

17. Դատավորի մասնագիտությունը պետք է հասանելի լինի ոչ միայն հատուկ վերապատրաստում անցած երիտասարդ իրավաբանների, այլ նաև՝ իրավաբանի մասնագիտական աշխատանքի հարուստ փորձ ունեցող իրավաբանների համար (այսինքն՝ կարիերայի միջին հատվածից դատական համակարգ մուտքի հնարավորություն): Համապատասխան մասնագիտական ոլորտում կուտակված փորձի՝ դատավորի պաշտոնի համար համարժեքության գնահատումը պետք է զգուշորեն իրականացնել:

Իրավաբանական կրթության բարելավումը

18. Դատավորի մասնագիտության հասանելիությունը պետք է սահմանափակել բարձրագույն իրավաբանական կրթության աստիճան ունեցող թեկնածուներով: Համալսարանական կրթության ուսումնական ծրագրերում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել վերլուծական հմտությունների դասավանդմանը: Պետք է ծրագրերում ներառել այնպիսի տարրեր, ինչպիսիք են գործնական վարժությունները, պրակտիկ փորձը, իրավաբանական կլինիկաները և դատախաղերը: Կրթության միևնույն մակարդակը պետք է երաշխավորել պետական և մասնավոր համալսարաններում, ներառյալ՝ հեռակա ուսուցման ծրագրերում: Համալսարանական ուսումնական ծրագրերի արտաքին գնահատումը կարող է դրական ազդեցություն ունենալ դրանց կատարելագործման վրա:

Դատավորների հատուկ ուսուցման բարելավումը

19. Այն երկրներում, որոնցում դատավորների դպրոցներն ընտրության գործընթացի մաս են կազմում, դպրոցները պետք է անկախ լինեն գործադիր իշխանությունից: Ուսուցման ծրագրերը պետք է ուղղվեն դատական ծառայության կարիքները բավարարելուն, ի հավելումն համալսարանական կրթության: Դրանք պետք է ներառեն այնպիսի թեմաներ, ինչպիսիք են էթիկան, հաղորդակցության հմտությունները, վեճեր լուծելու կարողությունը, կառավարչական հմտությունները և իրավական գրագրության հմտությունները: Եթե գոյություն ունի դատական խորհուրդ, ապա վերջինս կարող է ընդունել դատավորների իրավաբանական կրթության վերաբերյալ հանձնարարականներ՝ մատնանշելով, մասնավորապես, անհրաժեշտ համապատասխան հմտությունները և խորհուրդներ դատավորների շարունակական կրթության վերաբերյալ:

20. Սույնի 19-րդ պարբերության մեջ նշված հատուկ կրթություն պետք է կազմակերպել նաև դատական համակարգում աշխատանքի անցնող՝ այլ մասնագիտությունների տեր անձանց համար:

Աշխատանքի ընդունման գործընթացը

21. Ընտրության գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի դատավորների ընտրության կարգը և չափորոշիչները հստակորեն սահմանված լինեն օրենքով: Թափուր տեղի մասին հայտարարությունը, ինչպես նաև պայմանները և կարգը պետք է հրապարակվեն և լայնորեն տարածվեն: Հանրությանը մատչելի պետք է լինի դիմող բոլոր թեկնածուների ցանկը (կամ առնվազն նախառակավորված թեկնածուների ցանկը): Ընտրող մարմինը պետք է լինի անկախ, ներկայացուցչական և հանրության նկատմամբ պատասխանատու (*տես 3-4-րդ պարբերությունները*): Այն պետք է հարցազրույց անցկացնի առնվազն վերջնական փուլին հասած թեկնածուների հետ՝ պայմանով, որ և հարցազրույցի թեման, և դրա տեսակարար կշիռն ընտրության գործընթացում նախապես սահմանված լինեն:

22. Եթե պահանջվում են անձի անցյալի ստուգումներ, ապա դրանք պետք է իրականացնել առավելագույնս զգուշությամբ՝ խստորեն հենվելով օրենքի գերակայության սկզբունքի վրա: Ընտրող մարմինը կարող է ոստիկանությունից պահանջել դատվածության ստանդարտ ստուգում, ինչպես նաև՝ պաշտոնի հետ անհամատեղելիության այլ հիմքերի պարզաբանում: Ստուգման արդյունքները պետք է տրամադրվեն դիմողին, ով պետք է իրավունք ունենա դրանք բողոքարկել դատական կարգով: Անձի անցյալի որևէ այլ ստուգում անվտանգության մարմինների կողմից չպետք է իրականացվի: Անձի անցյալի ստուգումների հիման վրա թեկնածությունը մերժելու մասին որոշումը պետք է պատճառաբանված լինի:

23. Եթե դատավորի վերջնական նշանակումը կատարում է պետության նախագահը, ապա նշանակելու հայեցողությունը պետք է սահմանափակվի ընտրող մարմնի (օրինակ՝ դատական խորհուրդ, որակավորման հանձնաժողով կամ փորձագիտական հանձնաժողով, *տես 3-4-րդ պարբերություններ*) առաջադրած թեկնածուների շրջանակով: Այդպիսի թեկնածուի նշանակումը կարող է մերժվել միայն ընթացակարգային հիմքերով, ընդ որում՝ պատճառաբանված որոշմամբ: Այդ դեպքում ընտրող մարմինը պետք է վերանայի իր որոշումը: Որպես տարբերակ՝ կարելի է, օրինակ, ընտրող մարմնին իրավունք վերապահել՝ ձայների որակյալ մեծամասնությամբ հաղթահարելու նախագահի վետոն: Բոլոր որոշումները պետք է կայացվեն օրենքով սահմանված կարճ ժամկետներում:

Փոքրամասնությունների ներկայացվածությունը դատական համակարգում

24. Ընդհանուր առմամբ, ցանկալի կլինի, որպեսզի դատական համակարգի կազմում արտացոլված լինի երկրի բնակչության կառուցվածքը: Դատական համակարգում փոքրամասնությունների ներկայացվածությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է թերներկայացված խմբերին խրախուսել, որպեսզի նրանք ձեռք բերեն դատավոր դառնալու համար անհրաժեշտ որակավորումները: Որոշակի փոքրամասնության խմբի պատկանելու հիմքով որևէ մեկին բացառելն արգելվում է:

<u>III մաս. դատավորների հաշվետվողականությունը և դատավորի անկախությունը դատական որոշումներ կայացնելիս</u>

Կարգապահական վարույթները

25. Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներով պետք է լուծվեն ենթադրյալ մասնագիտական խախտումների այն դեպքերը, որոնք կոպիտ են, աններելի, և խարխլում են դատական իշխանության հեղինակությունը: Դատավորները չպետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների օրինակների կամ դատարանների քննադատության համար:

Կարգապահական որոշումներ կայացնող անկախ մարմինը

26. Պետք է գոյություն ունենա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում որոշումներ կայացնող հատուկ անկախ մարմին (դատարան, հանձնաժողով կամ խորհուրդ) (*տես 9-րդ պարբերությունը*): Դատավորների կարգապահությանն առնչվող խնդիրներով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք ունենան: Ավելին, դրանց կազմում չպետք է լինեն այնպիսի անդամներ, ովքեր օժտված կլինեն կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ: Նշված մարմինները պետք է մեղադրվող դատավորին ընձեռեն դատավարական երաշխիքներ, ներառյալ՝ պաշտպանությունը

ներկայացնելու իրավունքը և իրավասու դատարանում որոշումը բողոքարկելու իրավունքը: Դատավորների գործերով կարգապահական լսումները պետք է անցկացվեն թափանցիկության պայմաններում: Դրանք պետք է լինեն դռնբաց, բացառությամբ երբ մեղադրվող դատավորը միջնորդություն է ներկայացնում լսումը դռնփակ անցկացնելու մասին: Այդ պարագայում միջնորդության հիմնավորված լինելու հարցը որոշում է դատարանը: Դատավորի կարգապահության վերաբերյալ որոշումները պետք է պատճառաբանված լինեն: Կարգապահական տույժերի վերաբերյալ վերջնական որոշումները պետք է հրապարակվեն:

Դատավորների մասնագիտական գնահատումը

27. Եթե անցկացվում են դատավորների մասնագիտական գնահատումներ, ապա դրանք չպետք է օգտագործվեն՝ ի վնաս դատական որոշումների կայացման անկախության: Դատավորների կատարողականի գնահատումը պետք է հիմնականում լինի որակական՝ ուշադրություն դարձնելով նրանց հմտություններին, այդ թվում՝ մասնագիտական բանիմացությանը (օրենքի իմացություն, դատական նիստ անցկացնելու կարողություն, պատճառաբանված որոշումներ գրելու կարողություն), անձնական որակներին (աշխատանքային բեռը կրելու կարողություն, որոշումներ կայացնելու կարողություն, նոր տեխնոլոգիաներ կիրառելու պատրաստակամություն), սոցիալական որակներին (միջնորդելու կարողություն, կողմերին հարգելու ունակություն), ինչպես նաև՝ վարչական պաշտոնի նշանակվելու հնարավորության դեպքում, առաջնորդելու և ղեկավարելու համար պահանջվող որակներին: Թվարկված հմտությունները պետք է սերմանվեն թե դատավորների ուսուցման ծրագրերի, թե ընթացիկ աշխատանքի շրջանակներում:

28. Դատավորները չպետք է որևէ պարագայում գնահատվեն իրենց որոշումների կամ դատավճիռների բովանդակության հիման վրա (կամ ուղղակիորեն, կամ՝ բեկանման տոկոսային ցուցանիշի հաշվարկով): Դատավորի կողմից կոնկրետ գործի լուծումը չպետք է որևէ պարագայում նրան պատասխանատվության ենթարկելու հիմք դառնա: Դատարանների գործունեության արդյունավետության վերաբերյալ վիճակագրական տվյալները հիմնականում օգտագործվելու են վարչական նպատակների համար՝ դատավորների գնահատման գործընթացում կիրառվելով ի թիվս այլ գործոնների: Դատավորների գնահատման օգնությամբ կարելի է օգնել դատավորներին՝ սեփական աշխատանքի մեջ բացահայտելու այն ոլորտները, որոնցում նրանք կարող են կատարելագործվելու ցանկություն ունենալ: Դատավորների գնահատման արդյունքները կարող են կիրառվել նաև մասնագիտական առաջխաղացման նպատակով: Ցմահ պաշտոնավարման ժամկետով դատավորների նշանակելու պարագայում ընդունելի չեն դատավորների այնպիսի պարբերական քննությունները (ատեստացիաներ-վերապատրաստում), որոնց արդյունքում նրանք կարող են հեռացվել պաշտոնից կամ ենթարկվել այլ պատժամիջոցների:

29. Մասնագիտական գնահատման չափորոշիչները պետք է լինեն հստակորեն սահմանված, թափանցիկ և միասնական: Հիմնարար չափորոշիչները պետք է նախատեսված լինեն օրենքով: Պարբերական գնահատման մեջ օգտագործվող կոնկրետ չափորոշիչները, ինչպես նաև՝ գնահատումների կատարման ժամկետները և մեխանիզմները, պետք է մասնավորեցվեն ենթաօրենսդրական ակտերով:

Անկախ գնահատումները

30. Չնայած որ դատական խորհուրդը կարող է որոշակի դերակատարում ունենալ դատավորների մասնագիտական գնահատման չափորոշիչները և կարգը սահմանելու հարցում, գնահատումը պետք է անցկացնել տեղական մակարդակով: Գնահատումը պետք է անցկացնեն հիմնականում այլ դատավորները: Դատարանի նախագահը չպետք է դատավորին գնահատելու բացառիկ իրավասությամբ օժտված լինի: Դատարանի նախագահից զատ, այդ գործընթացին պետք է մասնակցի միևնույն դատարանի, ինչպես նաև այլ դատարանների դատավորների խումբ: Վերջինս պետք է դատավորի ջանասիրությունը, կողմերին հարգալիր վերաբերվելու և դատավարական կանոնները պահպանելու կարողությունը գնահատելիս հաշվի առնի նաև արտաքին այն սուբյեկտների կարծիքները, որոնք կանոնավոր կերպով շփվում են դատավորի հետ (օրինակ՝ փաստաբաններ), ինչպես նաև՝ իրավագիտության դասախոսների տեսակետները:

31. Գնահատումները պետք է ներառեն դատավորի գրավոր որոշումների ուսումնասիրություն, ինչպես նաև՝ նրա կողմից դատական նիստի վարման կարգի դիտարկում: Գնահատումները պետք է թափանցիկ լինեն: Դատավորների կարծիքը նույնպես պետք է լսել: Նրանք պետք է տեղեկացվեն գնահատման արդյունքների մասին և ունենան բողոքարկելու հնարավորություն:

Մասնագիտական հաշվետվողականությունը՝ թափանցիկության միջոցով

32. Դատական նիստը, որպես կանոն, պետք է լինի թափանցիկ: Դատական նիստերի դահլիճում դատավորի վարքագծի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև՝ դատական նիստերի ստույգ արձանագրություններ ստանալու նպատակով անհրաժեշտ է դատական նիստը ձայնագրել լիարժեք վերարտադրության հնարավորություն ընձեռող էլեկտրոնային սարքերով: Գրավոր արձանագրությունները և սղագրությունները բավարար չեն: Դատավորների մասնագիտական հաշվետվողականությունը և հանրության նկատմամբ հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է որոշումները տվյալների շտեմարաններում և ինտերնետային կայքերում հրապարակել այնպես, որպեսզի դրանք իսկապես հասանելի լինեն և անվճար: Որոշումները պետք է ինդեքսավորված լինեն ըստ խնդրո առարկայի, արծարծված իրավական խնդիրների և կազմող դատավորների անունների: Կարգապահական վարույթներով որոշումներ

կայացնող մարմինների որոշումները նույնպես պետք է հրապարակվեն *(տես նաև 26-րդ պարբերությունը)*:

33. Դատարանների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու նպատակով իշխանությունները պետք է խրախուսեն դատարանների հասանելիությունը լրագրողների համար՝ միաժամանակ նաև ստեղծելով մամլո քարտուղարի կամ մամուլի հետ աշխատանքի պատասխանատուի հաստիքներ: Դատական նիստերին լրագրողների մասնակցության խոչընդոտներ կամ արգելակներ չպետք է լինեն:

Քրեական գործերով անկախ դատական որոշումների կայացումը

34. Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունների մեծ մասում արդարադատության համակարգերի մեղադրական կողմնակալության խնդիրը լուծման կարիք ունի: Արդարացման դատավճիռները մինչ օրս համարվում են «սև բծեր» կամ ձախողումներ: Արդարացման դատավճիռներից խուսափելու ուղղությամբ դատավորների վրա առկա ճնշումը նվազեցնելու նպատակով խորհուրդ է տրվում անպայմանորեն փոփոխել նրանց մասնագիտական գնահատման համակարգը (համապատասխան դեպքերում՝ նաև դիտարկել դատախազների և քննիչների գնահատման համակարգում փոփոխություններ կատարելու նպատակահարմարությունը): Արդարացման դատավճիռների քանակը երբևէ չպետք է դատավորների գնահատման ցուցանիշ լինի: Դատավորներին անհրաժեշտ է իսկական հայեցողություն ձեռք բերել մինչդատական կալանքի վերաբերյալ միջնորդությունները քննելու և լուծելու հարցում: Արդարացման դատավճիռների բողոքարկումը վերաքննության կարգով պետք է թույլատրել միայն ամենաբացառիկ հանգամանքներում:

Ներքին անկախությունը

35. Ողջունելի չէ ավելի բարձր ատյանի դատարանների կողմից հրահանգների, բացատրությունների կամ պարզաբանումների հրապարակման պրակտիկան: Այնուհանդերձ, եթե այդպիսիք կան, ապա դրանք չպետք է պարտադիր լինեն ավելի ցածր ատյանի դատարանների համար: Այլապես, դրանցով կխախտվի առանձին դատավորի անկախությունը: Բացի այդ, ավելի բարձր ատյանի դատարանների օրինակելի որոշումները և դրանց կողմից ուղղակիորեն որպես նախապես ճանաչված որոշումները պետք է հանձնարարականի կարգավիճակ ունենան, սակայն՝ այլ գործերով պարտադիր չլինեն ավելի ցածր ատյանի դատարանների դատավորների համար: Դրանք չպետք է կիրառվեն՝ սահմանափակելու ավելի ցածր ատյանի դատարանների կողմից որոշումներ կայացնելու ազատությունը և պատասխանատվությունը: Օրենքի մեկնաբանման միատեսակությունն անհրաժեշտ է խրախուսել դատական պրակտիկայի ուսումնասիրություններով, որոնք նույնպես պարտադիր բնույթ չունեն: